Հաստատում եմ՝
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի տնօրեն պատմական գիտությունների թեկնածու,
դոցենտ Ա.Մ. Հայրապետյան

ԿԱՐԾԻՔ

Արարատ քահանա Պողոսյանի «Հայոց եկեղեցին ԺԶ-ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարում» Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

ԽՍՀՄ փլուզումը հնարավորություն տվեց նախկին խորհրդային ժողովուրդներին ազատվելու գաղափարական արգելքներից ու նորովի արժևորելու սեփական պատմությանը վերաբերող բազմաթիվ հիմնախնդիրներ:

Հայոց պատմության համատեքստում առաջնային վերանայման անհրաժեշտություն ունի ԺԵ-ԺԸ դդ. հայ ազատագրական պայքարի թեման: Հույժ կարևոր է խնդրո առարկան լուսաբանել Հայ Եկեղեցու ընդհանուր դերակատարման համատեքստում՝ ներկայացնելու համար եկեղեցու տեղն ու դերն այդ պայքարում՝ չտարանջատելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու պատմությունը հայ ժողովրդի պատմությունից, քանի որ համահայկական պետականության կորստից հետո Եկեղեցին դարձավ այն միակ կառույցը, որ իր ուսերին վերցրեց Հայոց անկախ պետականության վերականգնման գործի կազմակերպումն ու ղեկավարումը: Հայ Եկեղեցին դարձավ այն համահայկական կառույցը, որն իր շուրջը համախմբեց հայ ժողովրդին թե՛ հայրենիքում, թե՛ գաղթօջախներում: Ասել է թե՝ Հայ Եկեղեցին, որ հայության հոգևոր իշխանության կրողն էր, դարձավ նաև քաղաքական իշխանության կրողն ու ներկայացուցիչը՝ հայ ինքնության որոշիչ հենասյունը:

Հրապարակային պաշտպանության ներկայացված սույն ատենախոսությունը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու դերն ու գործունեությունը ԺԶ-ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարի հոլովույթում ներկայացնելու համեստ փորձ է: Հայ իրականության մեջ առաջին անգամ ի ցույց է դրվում Ս. Էջմիածնի դերակատարությունը հայ ազատագրական պայքարի գաղափարական, կազմակերպչական, ինչպես նաև քաղաքական կողմնորոշման հարցերում, նորովի քննության են առնվում ԺԶ-ԺԷ դարերի մի շարք

վավերագրեր՝ հրապարակված ու վերլուծված ոչ Առաքելական Եկեղեցու հետևորդնե-րի կողմից, շրջանառության մեջ են դրվում ցայսօր հայագիտությանը անհայտ արխի-վային վավերագրեր հայաստանյան և արտերկրի արխիվներից:

Աշխատանքն ունի ամուր սկզբնաղբյուրային հենք: Ընդարձակ հավելվածով գի-տական շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ նորահայտ արխիվային վավերա-գրեր: Հայալեզու և օտարալեզու մեծածավալ գրականության ուսումնասիրմամբ Արա-բատ քահանա Պողոսյանին հաջողվել է հոգևոր տեսանկյունից մեկնաբանել ԺԶ-ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարը, կատարել մեկ տասնյակից ավելի ճշգրտում-ներ, որոնք էական նշանակություն կարող են ունենալ տվյալ ժամանակաշրջանի կնճռոտ հարցերի լուսաբանման գործում: Ատենախոսության արժանիքներից մեկն էլ ժամանակաշրջանի միջազգային իրադրության վերլուծությունն է, եվրոպական տե-րությունների արտաքին քաղաքականության առաջնահերթությունների վերհանումը, հայ ժողովրդի շահին դրանց համընկման կամ չհամընկման պարզաբանումը:

Հրապարակային պաշտպանության ներկայացված ատենախոսությունը, սակայն, զերծ չէ նաև որոշ թերացումներից.

1. Թեկնածուական ատենախոսությունը թեև վերնագրված է ***«Հայոց եկեղեցին ԺԶ-ԺԷ դարերի հայ ազատագրական պայքարում»,*** սակայն հիմնականում քննության է առնված Ամենայն հայոց կաթողիկոսության ծավալած գործունեությունն ազատա-գրական պայքարում: Հետազոտողի ուշադրությունից դուրս են մնացել Սսի և Աղ-թամարի կաթողիկոսությունների, Կ. Պոլսի պատրիարքության, մասնավորապես՝ Խաչատուր Գաղատացու, Հովհաննես Թութունջու, Խաչատուր Բ Զեյթունցու, Ազա-րիա Ա Ջուղայեցու և այլոց գործունեությունը: Մեզ համար ընդունելի չէ նաև ատե-նախոսության ժամանակագրական շրջանակը: Հեղինակը հստակ չի հիմնավորում, թե ինչո՛վ է պայմանավորված աշխատանքի սահմանափակումը հենց ԺԷ-ԺԶ դարե-րով, եթե հայ պետականության վերականգնման առաջին լուրջ քայլերը կատարվել են արդեն ԺԵ դարում՝ Զաքարիա Գ և Ստեփանոս Դ Տղան կաթողիկոսների կողմից: Ատենախոսությունն անշուշտ կշահեր, եթե ներկայացվեր Հայ Առաքելական եկեղե-ցու ողջ գործունեությունը հայոց պետականության վերականգնման ուղղությամբ:
2. 2.1.3 հատվածում (էջ 40) «Սեբաստացու» փոխարեն պետք է լիներ «Սալմաստեցի»:
3. Աշխատանքում չի երևում, թե կաթողիկոսական բանագնացությունների ընթացքում ինչպե՛ս է արտահայտվել «արդարացի պատերազմի» գաղափարը: Պարզ չէ նաև, թե

ինչպե՛ս է այս գաղափարը գործնականում իրացվել մելիքների հետ հարաբերություններում:

4. Էջ 43-ում պարզ չէ՝ մեջ բերված միտքը վկայաբերվում է ըստ Ղ.Ալիշանի՞, թե՞ Մ.Չամչյանի:
5. Լրացուցիչ պարզաբանման կարիք ունեն ատենախոսության N 38 և 40 հղումները: Հեղինակը խոսում է պատերազմի նկատմամբ Հայ Եկեղեցու ունեցած վերաբերմունքից, սակայն հղում Ավետարանն ըստ Մատթեոսի:
6. Էջ 51-ում հեղինակը գրում է. «Միքայել Սեբաստացի կաթողիկոսը լավագույնս տիրապետում էր աշխարհում տիրող իրավիճակին», իսկ էջ 66-ում ավելացնում. «Միքայել Սեբաստացին և նրա գործակիցները հաշվարկել էին Հայաստանի ամբողջական ազատագրության դժվարությունները և նկատի առել բոլոր դժվարությունները» (ծնթ. 254): Մեր կարծիքով, հեղինակը խիստ գերագնահատել է Միքայել Սեբաստացու կարողությունները:
7. Խրթին է ձևակերպված հետևյալ միտքը. «Այդպիսով՝ թուրքական ծավալապաշտական քաղաքականությունն ուղղակիորեն սպառնալիք էր դառնում Եվրոպայի համար, ինչպես նաև՝ Բալկանյան թերակղզում և Աֆրիկայում» (էջ 51):
8. Մեր կարծիքով, աշխատանքի 2.2.3. բաժինը՝ «Միքայել կաթողիկոսի ծննդավայրի և «Սեբաստացի» անվան խնդիրը», ավելորդ է (էջ 57-59): Կաթողիկոսի ծննդավայրի հարցը սույն ատենախոսության շրջանակներում քննելու անհրաժեշտություն չկա:
9. Համաձայն չենք ատենախոսի այն պնդմանը, թե Հակոբ Ջուղայեցի «կաթողիկոսի նամակագրությունը քննության է ենթարկված հատկապես դավանանքին առնչվող, պարտամուրհակների, կալվածագրերի և ներեկեղեցական խնդիրների շրջագծում՝ շղարշելով հայ ազատագրությանը վերաբերող կարևոր արձանագրումները» (էջ 86-87): Մեր կարծիքով, նմանատիպ պնդումը նսեմացնում է նախորդ հետազոտողների այս ուղղությամբ կատարած աշխատանքը:
10. Ատենախոսության մեջ հաճախ կարելի է հանդիպել այն մտքին, թե Եվրոպա մեկնող բանագնացներն իրենց բուն նպատակը քողարկելու և թուրք-պարսկական հետապնդումից խուսափելու նպատակով «շղարշվում էին կրոնական քողով»: Նշենք, որ ատենախոսի այս տեսակետը հեռու է իրականությունից: Ատենախոսն անհիմն թերագնահատում է պարսկական և թուրքական իշխանությունների հնարավորությունները: Հակառակ դեպքում ստացվում է հետևյալ՝ իրականությունից շատ հեռու պատկերը. ուրեմն Էջմիածնում նստած կաթողիկոսը «լավագույնս տիրապետում էր

աշխարհում տիրող իրավիճակին» և հմտորեն վերլուծում էր աշխարհաքաղաքական իրավիճակը, իսկ ահռելի ռեսուրսների տիրապետող թուրքական ու պարսկական իշխանությունները՝ ոչ:

11. Աշխատանքը կշահեր, եթե օգտագործվեին խնդրին վերաբերող օսմանյան, պարսկական, վրացական, ինչպես նաև եվրոպական աղբյուրներ ու գրականություն:
12. Աշխատանքում առկա են նաև տեխնիկական բնույթի բացթողումներ (էջ 6, 23-27, 32, 46, 75, 95, 110-111):

Մատնանշված թերացումները, սակայն, չեն ստվերում կատարված աշխատանքը: Հրապարակային պաշտպանության ներկայացվող աշխատանքն արժեքավոր գիտական ուսումնասիրություն է, լիովին բավարարում է ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները, իսկ նրա հեղինակ Արարատ քահանա Պողոսյանն արժանի է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը հաստատվել է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Հայոց պատմության» խմբի 21.08.2023թ. նիստում: Քննարկմանը մասնակցել են ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ տնօրեն, «Հայոց պատմության» խմբի ղեկավար՝ Ա.Ս. Հայրապետյանը (պ.գ.թ., դոցենտ), գիտքարտուղար՝ Ա.Ա. Ակոպովը (պ.գ.թ.), առաջատար գիտաշխատող՝ Ս.Գ. Պետրոսյանը (պ.գ.դ.), ավագ գիտաշխատող՝ Կ.Վ. Ալեքսանյանը (պ.գ.թ.) և գիտաշխատող՝ Գ.Ս. Այվազյանը (պ.գ.թ.):

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Հայոց պատմության» խմբի ղեկավար՝ պ. գ. թ., դոցենտ Ա.Ս. Հայրապետյան

22.08.2023թ.

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի «Հայոց պատմության» խմբի ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Ա.Ս. Հայրապետյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների
կենտրոնի գիտքարտուղար, պ.գ.թ. Ա.Ա. Ակոպով

22.08.2023թ.